American University of Armenia

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Հատուկ դասընթացների բաժին*

## ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

**դասախոս՝ պրոֆեսոր Հրաչ Զադոյան**
չորեքշաբթի, **հունիսի** 22, 1994 ժ. 16.00
Հայաստանի Ամերիկյան Համալսարանի փոքր դահլիճում (հինգերորդ հարկ) Երեւան, Մարշալ Բաղրամյան 40

**Դասախոսի մասին.** Պրոֆեսոր Հրաչ Զադոյանը Նյու Յորքի համալսարանի Քուինզ քոլեջի պրոֆեսոր է եւ վերջին քսան տարիների ընթացքում դասավանդել է նույն քոլեջի քաղաքական գիտությունների բաժանմունքում: Նախկինում նա եղել է նույն քոլեջի դեկանը եւ այդ ծրագրերից զատ զբաղվել է նաեւ էթնիկական եւ տարածքային խնդիրների ուսումնասիրման ծրագրով: Պրոֆ. Հրաչ Զադոյանը ծնվել է Ռումինիայում եւ վերաբնակություն հաստատել Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Միացյալ Նահանգների բանակում ծառայությունն ավարտելուց հետո նա սովորել է Քուինզ քոլեջի քաղաքագիտության բաժնում եւ այնուհետեւ շարունակել ուսումը Կոլումբիայի համալսարանի միջազգային քաղաքականության բաժնի ասպիրանտուրայում, որտեղ եւ պաշտպանել է գիտական հետազոտություններ: Նա մասնագիտացել է այնպիսի հարցերում, ինչպիսիք են խորհրդա-ամերիկյան հարաբերությունները, ամերիկյան արտաքին քաղաքականությունը եւ միջազգային հարաբերությունները:

Նա բազմաթիվ դասախոսություններ է կարդացել նախկին Խորհրդային Միության, Արեւմտյան Եվրոպայի եւ ետխորհրդային շրջանում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության, ինչպես նաեւ Հայաստանի եւ հայկական սփյուռքի հետ առնչվող թեմաներով: Պրոֆ. Զադոյանը ամերիկահայ համայնքի ակտիվ անդամներից է եւ ներկայումս Ամերիկայի Արեւելյան Թեմի Ազգային Առաջնորդարանի գործադիր խորհրդի անդամ: 1993 թվականի աշնանը Նյու Յորքում կայացած, Կիլիկիայի թագավորությանը նվիրված միջազգային կազմկոմիտեի նախագահն էր: Նա մասնակցել է բազմաթիվ կոնֆերանսների, գիտաժողովների եւ ծավալել է ակտիվ գործունեություն կրթության բնագավառում:

Դասախոսությունները կընթանան անգլերեն լեզվով հայերեն համընթաց թարգմանությամբ:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 27-33-70 կամ 27-16-58 հեռախոսահամարներով:

40 Marshall Bagramian Street, Yerevan, 375019, Republic of Armenia
Telephone: 27-32-39, 27-10-85 ccc
Fax from USA: 0-11-7-885-2-15-10-48